

ազնիւ եւ քաղցրատես, որով զԷֆէֆէրէ՞ գիրքն
 տպեալ էր եւ պահէր առ ինքն զգիրն, եւ ոչ
 ումեք տայր եւ ոչ ինքն զտպագրատուն բանայր:
 Վասն որոյ՝ գրեաց առ նա Սրբազան վեհն
 (Սիմէոն Կաթողիկոս) զթուղթ սիրոյ եւ խն-
 դրեաց տալ զտպագրական գիրն սրբոյ Աթո-
 ոյս, կամ գնով եւ կամ ի յիշատակ հոգւոյն
 իւրոյ: Եւ թէ կամիցի զայս որով կերպիւ եւ
 իցէ ծանուցէ մերայնոցն որոց եւ կամիցի ինքն
 զմիտս իւր, զի գրեսցեն ինքեան. եւ կամ ինքն
 խօսիցի գրով եւ որպէս կամիցիս, ասէ, եւ ինձ
 է հաճելի:» (Գիւտ քհ. Աղանեանց, Գիւան Գ.
 Սիմէոն Կթղկսի. յիշատակարանը, Թիֆլիզ 1894,
 էջ 551, շ. Գ. Ջարբհ. Պատմ. հյկկն. տպա-
 գրութեան, Վենետ. 1895, էջ 184:) Վասն
 զի Սարգիս ինչպէս Նուրտինեան վ. կ'աւանդէ
 (Երգ Է), 1755ին վինետիկէն Պոլիս իր տունը
 բերել տուաւ տպարանն ու տառերը՝ նոյ գրքեր
 տպելու համար: Սակայն Յակոբ Նալեան Պա-
 տրիարք թոյլ չտուաւ տպագրել՝ բայց միայն
 իր իսկ ուղածները, որով Սարգիս ստիպուեցաւ
 այս խորհրդէն ետ կենալ: 1766ին Սիմէոն Կա-
 թողիկոս, երբեմն Սարգսի բարեկամն ու բարե-
 րարը (Երգ Թ), յիշեալ սիրալիր նամակաւ
 խնդրեց Սարգսէն, որ տպարանի տառերն Էջ-
 միածնի Աթոռոյն նուիրէ կամ ծախէ, միեւնոյն
 ժամանակ Կ.Պոլսոյ իր գործակալ Մահտեսի
 Մովսիսին ալ գրեց, որ սոյն տառերը գնէ
 Սարգսէն, որուն Կ.Պոլսոյ տպագրիչ մը 1500
 դահեկան առաջարկեր է. մինչ Սարգիս 1500